ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» սեպտեմբերի 2012թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 հասցեում գտնվող բնակարանները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) կից հավելվածում նշված քաղաքացիներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«_____» _____ 2012թ.
N _____-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Բնակարանի հասցեն	Փաստացի բնակվողների անուն, ազգանուն	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրամցման վկայականի համարը
1.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.3	Առուստամյան Գրիշա Ավագյան Սիրվարդ Առուստամյան Արմեն Առուստամյան Սիմա Առուստամյան Սոնա Առուստամյան Գրիշա Առուստամյան Սամվել	N 21032012-0220
2.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.4	Առուստամյան Ամիր Առուստամյան Իշխան Առուստամյան Կոլյա	N 21032012-01-0419
3.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.5	Առուստամյան Արմինե Մռավյան Անահիտ	N 21032012-01-0228
4.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.6	Բիշարյան Վարդիթեր Բիշարյան Հասմիկ Բիշարյան Մերի Բիշարյան Արտաշես Բիշարյան Անահիտ Հարությունյան Էլինար Հարությունյան Մելինա	N 21032012-01-0226
5.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.8	Բարսեղյան Կարինե Օսյան Հակոբ Օսյան Ռուբինա	N 21032012-01-0218
6.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.9	Ղազարյան Գրիշա Ղազարյան Կարեն Ղազարյան Վարսենիկ Ղազարյան Անի Ղազարյան Միեր	N 05042012-01-0354

7.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.10	Մկրտչյան Միքայել Վարդանյանց Էվելինա	N 21032012-01-0239
8.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.11	Սարգսյան Բորիկ Սարգսյան Սուլթանիկ Սարգսյան Թամարա Սարգսյան Բորիս Սարգսյան Սվետալան	N 23032012-01-0541
9.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.12	Մանուկյան Անժիկ Մանուկյան Անժելիկա Մանուկյան Նազենի Ռաֆայելյան Սամվել Մանուկյան Գոհար	N 06042012-01-0249
10.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.14	Ջուլիակյան Լյուդմիլա Արշակյան Տիգրան	N 13042012-01-0541
11.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.19	Հովեյան Կալինո Հովեյան Սամսոն Կարապետյան Նոնա Հովեյան Վարդուհի	N 21032012-01-0283
12.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.20	Սվարյան Օֆիկ Կարապետյան Մերուժան	N 13042012-01-0537
13.	Դավթաշեն 3 թաղամաս 6/2 շենք, հ.21	Վարդանյան Լուսաբեր Կիրակոսյան Նելլի Կիրակոսյան Լուսինե Կիրակոսյան Թեհմինե Կիրակոսյան Նարեկ Աբրահամյան Գառնիկ Աբրահամյան Արման Աբրահամյան Մարիա	N 05042012-01-0361

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄԱՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 հասցեում գտնվող շենքը նախկինում հանդիսացել է ԴՕՍԱԱՖ-ի ճաշարանի շենքը:

Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի վճռի համաձայն շենքը համարվել է տիրազուրկ և ճանաչվել է Երևանի Դավթաշեն համայնքի սեփականությունը և 2007թ.-ին համայնքի անվամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 110-րդ հոդվածի համաձայն՝ շենքը ներկայումս համարվում է Երևան համայնքի սեփականությունը:

Նշված շենքում 1998-2001թթ. սկսած մինչև օրս թվով 21 ընտանիքներ առանց իրավահաստատող փաստաթղթերի զբաղեցնում են տարածքներ, որոնք բնակիչների կողմից վերակառուցվել են բնակարանների և փաստացի բնակվում են այդտեղ:

Երևանի քաղաքապետի 15.02.2012թ. հ.1493-Ա որոշմամբ շենքի թվով 21 ոչ բնակելի տարածքներն ընդգրկվել են բնակելի ֆոնդում և ներկայումս թվով 13 բնակելի տարածքների նկատմամբ կատարվել են Երևան համայնքի սեփականության իրավունքների պետական գրանցում:

Նկատի ունենալով, որ Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 հասցեում բնակվող ընտանիքները փաստացի զբաղեցնում են տարածքներ առանց իրավահաստատող փաստաթղթերի, իսկ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն, Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են սեփականության իրավունքով անհատույց օտարվել համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները կամ բնակելի տները միայն այն անձանց, ովքեր փաստացի բնակվում և հաշվառված են տվյալ բնակարաններում կամ բնակելի տներում՝ ներկայացնելով բնակարանը կամ բնակելի տունը զբաղեցնելու իրավահաստատող փաստաթղթեր, նախագծում նշված ընտանիքներին բնակարանները սեփականության իրավունքով անհատույց օտարելու համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ